«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ 26.12.2025 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ «ՆԻՍՏ») ԹԻՎ 26/12/2025 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(արձանագրությունը կազմված է«29» դեկտեմբերի 2025 թ.-ին ՀՀ, ք. Երևանում և բաղկացած է 8 (ութ) թերթից (առանց հավելվածների))

Նիստը անցկացվել է.	26.12.2025թ. ժամը 11:00-ին (Երևանի ժամանակով)
Նիստի անցկացման կարգը.	Խորհրդի անդամների համատեղ մեկ վայրում ներկա գտնվելու միջոցով (անմիջական մասնակցությամբ)
Նիստի գումարման վայրը.	ՀՀ, քաղաք Երևան, Չարենցի փողոց 1, 2-րդ հարկ, 301 սենյակ

Նիստին մասնակցելու իրավունք ունեին և նիստին մասնակցեցին «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» բաց բաժնետիրական ընկերության (գրանցման համար՝ 273.130.03674, ՀՎՀՀ՝ 01503291) (այսուհետ՝ Ընկերություն) խորհրդի 10 անդամներից 8-ը.

1. Չերքեզյան Միեր՝ խորհրդի նախագահ
2. Ազիզյան Գրիգոր՝ խորհրդի անդամ (Ընկերության տնօրեն)
3. Հայրապետյան Արամ՝ խորհրդի անկախ անդամ
4. Մուտաֆյան Հովհաննես՝ խորհրդի անկախ անդամ
5. Քալաշյան Սաշուր՝ խորհրդի անդամ
6. Սողոմոնյան Հայկազ՝ խորհրդի անդամ
7. Իսրայելյան Աստղիկ՝ խորհրդի անդամ
8. Ալեքսանյան Ալլա՝ խորհրդի անդամ

Նիստին չէին մասնակցում Ընկերության խորհրդի անկախ անդամ Արսեն Կարապետյանը և խորհրդի անդամ Ստեֆան Լազարյանը: Նիստին մասնակցում էին Ընկերության խորհրդի 8 անդամները, ուստի նիստն իրավասու է (քվորումն առկա է):

Նիստին մասնակցում էին նաև Ընկերության խորհրդի կորպորատիվ քարտուղար Հայկուհի Ռուբինյանը, Ընկերության վերստուգող Իզաբելա Հովհաննիսյանը և Ընկերության իրավաբաններ Նարինե Բեգլարյանը և Անի Մկրտումյանը:

Նիստի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը.

Նիստի օրակարգը

1) Ընկերության խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկներն Ընկերության Խորհրդի թեկնածուների ցուցակում ընդգրկելու կամ թեկնածուների ցուցակում ընդգրկելը մերժելու մասին հարցը և Ընկերության խորհրդի թեկնածուների ցուցակի հաստատման հարցը:

2) Ընկերության բաժնետերերի 20.01.2026 թվականի ժամը 11:00-ին նշանակված արտահերթ ժողովում (այսուհետ՝ «Արտահերթ ժողով») քվեարկության համար անհրաժեշտ քվեաթերթիկների ձևի և բովանդակության հաստատման հարցը:

3) Արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատման հարցը:

4) Ընկերության բաժնետերերին Արտահերթ ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակի հաստատման հարցը:

5) Արտահերթ ժողովի գումարման մասին Ընկերության բաժնետերերին ծանուցելու կարգի հաստատման հարցը:

Նիստին բացման խոսքով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Չերքեզյանը՝ ներկայացնելով խորհրդի նիստի օրակարգում ներառված հարցերը: Վերջինս խոսքը փոխանցեց Ընկերության իրավաբան Ն. Բեգլարյանին, ով ամփոփեց Արտահերթ ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկության նպատակով խորհրդի անդամների կողմից ներկայացված թեկնածությունները: Ն. Բեգլարյանը նշեց, որ մինչև 25.12.2025 թվականը ժամը 18:00-ն ներկայացվել են խորհրդի անդամների թեկնածությունների հետևյալ առաջարկությունները.

1. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 10 տոկոսին տիրապետող թվով 10 բաժնետերերի կողմից ներկայացվել է իրենց թեկնածությունները (**ինքնառաջադրում**) Խորհրդի թեկնածուների ցուցակում ներառելու վերաբերյալ առաջարկ ըստ հետևյալի (առաջարկը կցվում է սույն արձանագրությանը որպես Հավելված 1).

- Չերքեզյան Միհեր Լևոնի
- Ազիզյան Գրիգոր Ստեփանի
- Հայրապետյան Արամ Ալբերտի (որպես անկախ անդամ)
- Մուտաֆյան Հովհաննես Զավենի (որպես անկախ անդամ)
- Ծատուրյան Նունե Իգորի (որպես անկախ անդամ)
- Քալաշյան Սաշուր Հրայրի
- Սողոմոնյան Հայկազ Գրիգորի
- Լազարյան Ստեֆան Իվանի
- Իսրայելյան Աստղիկ Ալբերտի
- Ալեքսանյան Ալլա Կոլյայի

2. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 2 տոկոսին տիրապետող թվով 4 բաժնետերերի (Սարգսյան Ռուբեն, Սարդարյան Սարգիս, Իսագուլյան Հրանտ, Մամյան Ռուզաննա) կողմից ներկայացվել է Խորհրդի թեկնածուների ցուցակում հետևյալ թեկնածությունները ներառելու վերաբերյալ առաջարկ (առաջարկը կցվում է սույն արձանագրությանը որպես Հավելված 2).

- Թարխանյան Անահիտ Արթուրի
- Խալաթյան Ալեքսանդր Արարատի
- Ներսիսյան Լևոն Հարությունի

3. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 2 տոկոսին տիրապետող թվով 2 բաժնետերերի (Աբելյան Վալերի, Այվազյան Հայկ) կողմից ներկայացվել է Խորհրդի թեկնածուների ցուցակում հետևյալ թեկնածությունները ներառելու վերաբերյալ առաջարկ (առաջարկը կցվում է սույն արձանագրությանը որպես Հավելված 3).

- Սարգսյան Ռուբեն Արարատի (որպես անկախ անդամ)
- Այվազյան Ռոբերտ Հայկի
- Մամյան Ռուզաննա Հովակիմի

4. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 2 տոկոսին տիրապետող բաժնետեր Բաղդասարյան Վաղինակի կողմից ներկայացվել է Խորհրդի թեկնածուների ցուցակում հետևյալ թեկնածությունները ներառելու վերաբերյալ առաջարկ (առաջարկը կցվում է սույն արձանագրությանը որպես Հավելված 4).

- Բաղդասարյան Վահան Վաղինակի (որպես անկախ անդամ)
- Իսագուլյան Հրանտ Էդուարդի (որպես անկախ անդամ)
- Մուտաֆյան Հովհաննես Զավենի

Ելույթներով հանդես եկան նաև խորհրդի մյուս անդամները, հարցերով դիմեցին Ընկերության իրավաբան Ն. Բեգլարյանին, տեղի ունեցավ հարցուպատասխան, քննարկվեց խորհրդի անդամների թեկնածությունների ներկայացման կարգի խախտումների հարցը, թեկնածությունների հաստատման և մերժման հիմքերը, քվեաթերթիկների ձևի և բովանդակության հաստատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, առաջարկվեց թեկնածությունների ներկայացման կարգի խախտումների մասին ծանուցել դիմումատուներին և առաջարկել շտկել առկա թերությունները:

Քվեարկության դրվեց խորհրդի Նիստի օրակարգում ընդգրկված առաջին հարցը և խորհուրդը Նիստին մասնակցող խորհրդի անդամների բաց քվեարկությամբ միաձայն (կողմ՝ 100%, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա) որոշեց.

1. Ընդունել Ընկերության խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ ներկայացված բոլոր առաջարկները՝ դրանք ներառելով Ընկերության Խորհրդի թեկնածուների ցուցակում և հաստատել

Ընկերության խորհրդի թեկնածուների ցուցակը՝ բաժանված երկու մասի ըստ անկախ և ոչ անկախ անդամների թեկնածությունների[1], ըստ հետևյալի.

Խորհրդի ոչ անկախ անդամների թեկնածուներ	*Խորհրդի անկախ անդամների թեկնածուներ*
1. Ազիզյան Գրիգոր Ստեփանի *2. Ալեքսանյան Ալլա Կոլյայի* *3. Այվազյան Ռոբերտ Հայկի* *4. Թարխանյան Անահիտ Արթուրի* *5. Իսրայելյան Աստղիկ Ալբերտի* *6. Լազարյան Ստեֆան Իվանի* *7. Խալաթյան Ալեքսանդր Արարատի* *8. Մամյան Ռուզաննա Հովակիմի* *9. Մուտաֆյան Հովհաննես Զավենի* *10. Ներսիսյան Լևոն Հարությունի* *11. Չերքեզյան Միհեր Լևոնի* *12. Սողոմոնյան Հայկազ Գրիգորի* *13. Քալաշյան Սաշուր Հրայրի*	*1. Բաղդասարյան Վահան Վաղինակի* *2. Իսագուլյան Հրանտ Էդուարդի* *3. Ծատուրյան Նունե Իգորի* *4. Հայրապետյան Արամ Ալբերտի* *5. Մուտաֆյան Հովհաննես Զավենի* *6. Սարգսյան Ռուբեն Արարատի*

2. Հաշվի առնելով, որ Հովհաննես Զավենի Մուտաֆյանն առաջադրվել է միաժամանակ որպես Խորհրդի ոչ անկախ անդամ (սովորական) և խորհրդի անկախ անդամ, ուստի խորհուրդը որոշեց, որ Հովհաննես Զավենի Մուտաֆյանը կհամարվի ընտրված որպես անկախ անդամ այն դեպքում, երբ քվեարկության արդյունքների հիման վրա վերջինս կլինի միաժամանակ առավելագույն ձայներ ստացած երեք անկախ անդամների թեկնածուներից մեկը և յոթ ոչ անկախ անդամներից մեկը: Ընդ որում, որպես խորհրդի ոչ անկախ անդամ կընտրվի հաջորդ առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:

3. Միաժամանակ խորհուրդը որոշեց հեռախոսազանգերի միջոցով ծանուցել խորհրդի անդամների թեկնածություններ առաջարկած բաժնետերերին՝ առաջարկելով շտկել թերությունները:

Քվեարկության դրվեց խորհրդի Նիստի օրակարգում ընդգրկված երկրորդ հարցը և խորհուրդը Նիստին մասնակցող խորհրդի անդամների բաց քվեարկությամբ միաձայն (կողմ՝ 100%, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա) որոշեց.

1. Հաստատել Ընկերության Արտահերթ ժողովի քվեարկության համար անհրաժեշտ քվեաթերթիկների ձևը և բովանդակությունն ըստ Օրակարգում ընդգրկված հարցերի (համաձայն սույն արձանագրության Հավելված 5 և Հավելված 6):

[1] Թեկնածությունները շարադրված են այբբենական հաջորդականությամբ:

Քվեարկության դրվեց խորհրդի Նիստի օրակարգում ընդգրկված երրորդ հարցը և խորհուրդը Նիստին մասնակցող խորհրդի անդամների բաց քվեարկությամբ միաձայն (կողմ՝ 100%, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա) որոշեց.

1. Հաստատել Արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը՝ 13.01.2026թ.:

Քվեարկության դրվեց խորհրդի Նիստի օրակարգում ընդգրկված չորրորդ հարցը և խորհուրդը Նիստին մասնակցող խորհրդի անդամների բաց քվեարկությամբ միաձայն (կողմ՝ 100%, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա) որոշեց.

1. Հաստատել Ընկերության բաժնետերերին Արտահերթ ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը ինչպես թվարկված է ստորև.

- *Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսին տիրապետող բաժնետերերի կողմից 08.12.2025 թվականին ներկայացված Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով գումարելու մասին պահանջի պատճենը,*
- *Ընկերության բաժնետերերի կողմից ներկայացված խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկների և կից ինքնակենսագրականների պատճենները:*

Քվեարկության դրվեցին խորհրդի Նիստի օրակարգում ընդգրկված հինգերորդ հարցը և խորհուրդը Նիստին մասնակցող խորհրդի անդամների բաց քվեարկությամբ միաձայն (կողմ՝ 100%, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա) որոշեց.

1. Սահմանել, Ընկերության բաժնետերերի ծանուցման կարգը, այն է՝ Ընկերության բաժնետերերին, Ընկերության հաշվիչ հանձնաժողովի անդամներին, Արտահերթ ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձանց ծանուցումը, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին քվեաթերթիկների տրամադրումը ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 71-րդ, 79-րդ հոդվածների համաձայն կիրականացվի www.armproject.am կայքում խորհրդի 26.12.2025թ. կայացած նիստի թիվ 26/12/2025 արձանագրությունը տեղադրելու միջոցով՝ 29.12.2025 թվականին, և հաստատել ծանուցման տեքստը ըստ հետևյալի.

«Սույնով «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» բաց բաժնետիրական ընկերության (գրանցման համար՝ 273.130.03674, ՀՎՀՀ՝ 01503291, գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1 փողոց) (այսուհետ՝ Ընկերություն) խորհուրդը, հիմք ընդունելով Ընկերության խորհրդի 26.12.2025թ. կայացած նիստի թիվ 26/12/2025 արձանագրությունը, ծանուցում է Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովի մասին (այսուհետ՝ «Արտահերթ ժողով»):

Արտահերթ ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամ՝ 20.01.2026թ. ժամը 11:00-ին (Ժողովի մասնակիցների գրանցման սկիզբ՝ ժամը 10:00) (Երևանի ժամանակով)

Արտահերթ ժողովի անցկացման կարգը՝ Ընկերության բաժնետերերի համատեղ ներկայությամբ

Արտահերթ ժողովի գումարման վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1 փողոց, դահլիճ

Արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը՝ 13.01.2026թ.

Արտահերթ ժողովի օրակարգը՝

- *Ընկերության խորհրդի բոլոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում:*
- *Ընկերության խորհրդի տասը անդամների ընտրություն:*

Ծանոթացման նպատակով սույն ծանուցմանը կից ներկայացվում է Ընկերության խորհրդի 26.12.2025թ. նիստի թիվ 26/12/2025 արձանագրությունը՝ կից քվեարթերթիկներով, ինչպես նաև Խորհրդի նույն որոշմամբ հաստատված Ընկերության բաժնետերերին Արտահերթ ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակում ընդգրկված տեղեկությունները և նյութերը:

Արձանագրությունը կազմվել է 29.12.2025 թվականին, 2 օրինակից, ՀՀ, ք. Երևանում և բաղկացած է «8» թերթից (առանց հավելվածների) հայերեն լեզվով: Սույն արձանագրությունը հանձնվել է Ընկերության արխիվ (խորհրդի թղթապանակ)՝ պահպանության համար:

Ստորագրություններ

Չերքեզյան Մհեր	Ազիզյան Գրիգոր
ստորագրություն	ստորագրություն

Հայրապետյան Արամ

ստորագրություն

Մուտաֆյան Հովհաննես

ստորագրություն

Իսրայելյան Աստղիկ

ստորագրություն

Քալաշյան Սաշուր

ստորագրություն

Սողոմոնյան Հայկազ

ստորագրություն

Ալեքսանյան Ալլա

ստորագրություն

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի խորհրդի նիստի թիվ 26/12/2025 արձանագրության հավելված 5

ՔՎԵԱՐԹԵՐԹԻԿ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ 20.01.2026 թվականին ժամը 11:00-ին նշանակված բաժնետերերի արտահերթ ժողովի օրակարգում ընդգրկված առաջին հարցի վերաբերյալ

<u>Օրակարգի հարց առաջին</u>. Ընկերության խորհրդի բոլոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում:

Անհրաժեշտ է կատարել (V) նշումը այն պատասխանի դիմաց, որի օգտին ցանկանում եք քվեարկել

Ընկերության խորհրդի բոլոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելուն «դեմ»	
Ընկերության խորհրդի բոլոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելուն «կողմ»	
Ընկերության խորհրդի բոլոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելուն «ձեռնպահ»	

*Անուն, ազգանուն, հայրանուն*_____

*Բաժնետոմսերի քանակ*_____

_____

(ստորագրություն)

Քվեաթերթիկների միջոցով քվեարկության դեպքում ձայները հաշվառվում են, եթե քվեարկողի կողմից թողնված է քվեարկության միայն մեկ տարբերակ: Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում:

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի խորհրդի նիստի թիվ 26/12/2025 արձանագրության հավելված 6

ՔՎԵԱՐԹԵՐԹԻԿ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ 20.01.2026 թվականին ժամը 11:00-ին

նշանակված բաժնետերերի արտահերթ ժողովի օրակարգում ընդգրկված երկրորդ հարցի վերաբերյալ

<u>Օրակարգի հարց երկրորդ.</u>Ընկերության խորհրդի տասը անդամների ընտրություն:

Ծանոթագրություն.

Թեկնածուների ցուցակը բաժանված է երկու մասի՝ սովորական անդամներ և անկախ անդամներ:

*Ոչ անկախ անդամների ցուցակից անհրաժեշտ է ընտրել **միայն 7 թեկնածուի**, իսկ անկախ անդամների ցուցակից **միայն 3 թեկնածուի:***

Քվեաթերթիկը վավեր է, երբ քվեարկողը կողմ է քվեարկել սովորական անդամների ցուցակից յոթ թեկնածուի և միաժամանակ անկախ անդամների ցուցակից՝ երեք թեկնածուի:

Նույն թեկնածուին միաժամանակ «կողմ» և/կամ «ձեռնպահ» և/կամ «դեմ» քվեարկելու դեպքում քվեաթերթիկը անվավեր է:

Անհրաժեշտ է կատարել (V) նշումը այն թեկնածուների դիմաց, որի օգտին ցանկանում եք քվեարկել: Մնացած թեկնածուներին դեմ կամ ձեռնպահ լինելու դեպքում որևէ նշում կարող է չկատարվել:

*Անուն, ազգանուն, հայրանուն*_____

*Բաժնետոմսերի քանակ*_____

_____

(ստորագրություն)

Խորհրդի անդամների թեկնածուներ (սովորական)

Թեկնածու	*Կողմ*	*Դեմ*	*Չեռնպահ*
Ազիզյան Գրիգոր Ստեփանի (անձնագիր՝ AU0365394, ծնված՝ 15.06.1947թ.)			
Ալեքսանյան Ալլա Կոլյայի (անձնագիր՝ AU0376776, ծնված՝ 26.02.1963թ.)			
Այվազյան Ռոբերտ Հայկի (ՆՔ՝ 009411844, ծնված 03.01.1980 թ.-ին)			
Թարխանյան Անահիտ Արթուրի (ՆՔ՝ 008535643)			
Իսրայելյան Աստղիկ Ալբերտի (ՆՔ՝ 011790045, ծնված՝ 25.06.1967թ.)			
Լազարյան Ստեֆան Իվանի (անձնագիր՝ AT0349902, ծնված՝ 16.06.1947թ.)			
Խալաթյան Ալեքսանդր Արարատի (անձնագիր՝ AT0279823)			
Մամյան Ռուզաննա Հովակիմի (ՆՔ՝ 015952427, ծնված 02.01.1958թ.-ին)			
Մուտաֆյան Հովհաննես Զավենի			
Ներսիսյան Լևոն Հարությունի (անձնագիր՝ AU0393898)			
Չերքեզյան Միեր Լևոնի (անձնագիր՝ AT0556045, ծնված՝ 24.03.1962թ.)			
Սողոմոնյան Հայկազ Գրիգորի (ՆՔ՝ 008349490, ծնված՝ 06.02.1966թ.)			
Քալաշյան Սաշուր Հրայրի (անձնագիր՝ AU0385245, ծնված՝ 20.05.1936թ.)			

Խորհրդի անդամի թեկնածուներ (անկախ անդամի)

Խորհրդի անկախ անդամի թեկնածու	*Կողմ*	*Դեմ*	*Չեռն պահ*
Բաղդասարյան Վահան (ծնված 20.02.1667թ.-ին)			
Իսագուլյան Հրանտ (ծնված 14.07.1961 թ.-ին)			
Ծատուրյան Նունե (անձնագիր՝ AT0317304, ծնված՝ 14.06.1968թ.)			
Հայրապետյան Արամ (անձնագիր՝ AS0280942, ծնված՝ 09.05.1983թ.)			
Մուտաֆյան Հովհաննես (անձնագիր՝ AS0578779, ծնված՝ 12.06.1952թ.)			
Սարգսյան Ռուբեն (AR0655375, ծնված 08.08.1981 թ.-ին)			